ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2011 թվականի N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 1009-Ն ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 1210-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. <<Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել <<Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. <<Երևանի Ն. Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել <<Երևանի տարածաշրջանային N 2 պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:

3) 17-րդ կետում <<Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

4) 23-րդ կետում <<Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

5) 30-րդ կետում <<Մարտունու պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

6) 32-րդ կետում <<Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

7) 38-րդ կետում <<Իջևանի պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

8) 44-րդ կետում <<Հրազդանի պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

9) 49-րդ կետում <<Եղեգնաձորի պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

10) 55-րդ կետում <<Ա. Աղաջանյանի>> բառերը փոխարինել <<Գ. Աղաջանյանի>> բառերով,

11) 57-րդ կետում <<Արմավիրի Ս. Լուկաշինի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով, իսկ <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն>> բառերը՝ <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն>> բառերով,

12) 58-րդ կետում «Գավառի» բառից հետո լրացնել «ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան» բառերը,

13) 73-րդ կետում «Արտաշատի պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն>> բառերով,

14) հավելվածը լրացնել 75-րդ նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

75.	<<Թալինի արհեստագործական ուսումնարան>> պետական ոչ առևտրային կազմակերպություն	<<Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ>> պետական ոչ առևտրային կազմակերպություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի <<Հայաստանի Հանրապետության արհեստագործական հոսքով ավագ դպրոցներն արհեստագործական ուսումնարաններ վերանվանելու, մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, <<Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական /արհեստագործական/ պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 1210-Ն որոշման հավելված 1-ում ուժը կորցրած ճանաչել 22-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին. ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարության սույն որոշման 11-րդ և 14-րդ կետերից բխող Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում

կատարելու վերաբերյալ՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Աշոտյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Անհրաժեշտությունը
2007թ. մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.12.07թ. N 1254-Ա/Ք հրամանով ընտրված 12 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակազմակերպումը տարածաշրջանային քոլեջների պայմանավորված է Եվրոպական Միության (ԵՄ) կողմից իրականացվող «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի 2009թ. տարեկան գործողությունների ծրագրի ներքո Հայաստանում միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի աջակցության ծրագրի» նախապայմաններով և ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգի դրույթներով: Այս ծրագրի համընդհանուր նպատակն է միասնական քաղաքականության իրականացումը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում ու աջակցությունը ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրին՝ բարձրացնելով ՄԿՈՒ ոլորտի որակը՝ նպատակ ունենալով այն դարձնել աշխատաշուկայի և առանձին անհատների մասնագիտական որակավորման ու վերաորակավորման կարիքներին առավել համապատասխան:
Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
12 քոլեջներից 10-ը գտնվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, իսկ Թալինի արհեստագործական ուսումնարանը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայությամբ: Որպես օրինաչափություն, կրթության ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող կազմակերպությունները (միջազգային, հասարակական, բարեգործական և այլն) նախապատվությունը տալիս են ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությանը՝ որպես համակարգի պատասխանատուի: Մասնավորապես ԵՄ նախապատվությունը տալիս է բյուջետային աջակցության ծրագրերին: Այն փաստը, որ Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջը և Թալինի արհեստագործական ուսումնարանը չեն գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, ԵՄ ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի իրականացման և այլ կազմակերպչական խնդիրների լուծման ժամանակ առաջ են բերում բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված լիազորված պետական մարմինների հետ լրացուցիչ անգամ համաձայնեցման, ժամանակի ոչ արդյունավետ օգտագործման, փաստաթղթաշրջանառության ավելացման հետ: 12 բազմագործառութային ուսումնական հաստատություններում բարեփոխման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու և հավելյալ դժվարություններից խուսափելու համար առաջնահերթ ենք համարում այս 2 ուսումնական հաստատությունների հանձնումը ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը: Միաժամանակ Թալինի արհեստագործական ուսումնարանը, որը միակ նախնական /արհեստագործական/ մասնագիտական ուսումնական հաստատությունն է ընտրված 12 հաստատություններում, անհրաժեշտ է վերակազմակերպել քոլեջի՝ հնարավորություն ընձեռնելով հետագայում նոր մասնագիտություններ ներդնելու համար:
Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Կառավարության ոլորտային ծրագրի առանցքային տարրերը, ինչպես նշված է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգում, հետևյալն են.

1. ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացում և կառավարման բարելավում,
2. Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման կարողություններին միտված չափորոշիչների ներդրում,
3. ՄԿՈՒ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում և կրթական արդյունքների բարելավում,
4. Որակի մոնիթորինգի մեխանիզմների արդիականացում,
5. Սոցիալական գործընկերության ամրապնդում և ինստիտուցիոնալացում:

Կարգավորման նպատակը և բնույթը

Ընտրված 12 քոլեջների փոխակերպումը սկզբնական և շարունակական մասնագիտական կրթություն և ուսուցում տրամադրող տարածաշրջանային բազմագործառութային կենտրոնների մոդելի կավարտվի ընթացիկ ծրագրի շրջանակներում: Այս հաստատությունները կդառնան ժամանակակից ՄԿՈՒ հաստատությունների մոդելներ՝ մասնավորապես ենթակառուցվածքների և սարքավորումների բարելավման արդյունքում ստեղծված ուսումնառության միջավայրի և կարողություններին միտված նոր մոդուլային ուսումնական պլանների և դասընթացների առումով:

Սա մեծ ներդրում կլինի ՄԿՈՒ ոլորտի որակի բարձրացմանը, ոլորտի կառուցվածքը և բովանդակությունը կդարձնի աշխատաշուկայի հմտությունների կարիքներին համապատասխան՝ խթանելով ակտիվ բնակչության փաստացի աշխատունակությանը և գործարարության մրցունակությանը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Չկան:

Ակնկալվող արդյունքը

ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ վերակազմակերպված 12 քոլեջները կունենան հետևյալ նոր անվանումները.

h/h	*Հին անվանումը*	*Նոր անվանումը*	*Լիազորված պետական մարմին*
1.	Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ	Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
2.	Երևանի Ն.Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջ	Երևանի տարածաշրջանային N 2 պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
3.	Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
4.	Իջևանի պետական քոլեջ	Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
5.	Հրազդանի պետական քոլեջ	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
6.	Արտաշատի պետական քոլեջ	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
7.	Եղեգնաձորի պետական քոլեջ	Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

8.	Արմավիրի Ս.Լուկաշինի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ	Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
9.	Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ	Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
10.	Մարտունու պետական քոլեջ	Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
11.	Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջ	Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
12.	Թալինի արհեստագործական ուսումնարան	Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Ընտրված 12 քոլեջների վերակազմակերպումից հետո կքննարկվի դրանց կանոնադրությունների փոփոխման հարցը:

Վերակազմակերպման հարցը քննարկվել է նաև Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհրդի /ՄԿՈՒՀԱԽ/ 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կայացած նիստում և արժանացել է հավանության:

Արմեն Աշոտյան

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաՆը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ ֆինանսների նախարարություն 1/4.4-3/10477-10 2010-12-20	Առաջարկվում է նախագծում ավելացնել նոր կետ, որով կսահմանվի, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ կներկայացնի առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարություն սույն որոշման 10-րդ և 12-րդ կետերից բխող Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ:	Ընդունված է:	Նախագծում արվել են համապատասխան փոփոխությունները:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ԳԱ/05/5849-10 2010-12-16	1.Առաջարկվում է նախագծի 10-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «10) հավելվածի 57-րդ կետում «Արմավիրի Ս.Լուկաշինի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն բառերը փոխարինել «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով», և հանել «իսկ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն» բառերով,» բառերը:	1. Ընդունված չէ: Այն փաստը, որ Արմավիրի պետական գյուղատնտեսական քոլեջը չի գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, ԵՄ ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի իրականացման և այլ կազմակերպչական խնդիրների լուծման ժամանակ առաջ է բերում բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված լիազորված պետական մարմինների հետ լրացուցիչ անգամ համաձայնեցման, ժամանակի ոչ արդյունավետ օգտագործման, փաստաթղթաշրջանառության ավելացման հետ:	Նախագծում չեն արվել փոփոխություններ:

	2.Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները. որոշման 55-րդ կետում «Ա.Աղաջանյանի» բառերը փոխարինել «Գ.Աղաջանյանի» բառերով, իսկ 58-րդ կետում՝ «Գավառի» բառից հետո լրացնել «ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան» բառերով:	2.Ընդունված է:	2.Նախագծում արվել են համապատասխան փոփոխությունները
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն 03/15/7499-10 2010-12-23	Առաջարկվում է նախագծի հավելվածի 75-րդ կետի 4-րդ սյունակի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան>> բառերով:	Ընդունված չէ: Այն փաստը, որ Թալինի արհեստագործական ուսումնարանը չի գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, ԵՄ ոլորտային քաղաքականության աջակցության ծրագրի իրականացման և այլ կազմակերպչական խնդիրների լուծման ժամանակ առաջ է բերում բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված լիազորված պետական մարմինների հետ լրացուցիչ անգամ համաձայնեցման, ժամանակի ոչ արդյունավետ օգտագործման, փաստաթղթաշրջանառության ավելացման հետ:	Նախագծում չեն արվել փոփոխություններ:
ՀՀ արդարադատության նախարարություն 01/336-11 2011-01-26	1.Առաջարկվում է նախագծի 1-ին կետի «փոփոխությունները» բառից հետո լրացնել «և լրացումները» բառերը: 2. Նախագծի 3-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել. մասնավորապես անհրաժեշտ է հանել «հանձնարարել» բառը, իսկ «նախարարության» բառն անհրաժեշտ է փոխարինել «նախարարին» բառով:	1. Ընդունված է: 2. Ընդունված է:	1. Նախագծում արվել են համապատասխան փոփոխությունները 2. Նախագծում արվել են համապատասխան փոփոխությունները